ընտրությամբ Ֆոխվայի պաշտոն ստանձնելու առաջարկը՝ դա իրեն համար մեծ անպատվություն համարելով[3]։ Ուրիշներն էլ նույն վերաբերմունքն ունեցան։ Նոր օրենքը գործադրվում էր խարխափելով։ Այս հանգամանքների մեջ բավական երկար ժամանակ պահանջվեց՝ նախկին խանություններում արտոնյալ դասակարգի անդամների իրավական դրությունը վերջնականապես կանոնավորելու համար, առավել, որ դա շաղկապված էր նախկին իրավակարգի մեջ նրանց ստացած եկամուտների հետ։

Այդ եկամուտների ապահովումը աչքի առաջ ուներ ցարական կառավարությունն իր հաջորդ միջոցառումները նախագծելիս։ Սենատոր Հանի մշակած օրենքի ձևափոխումն էր նաև այն կարևոր լրացումը, որով ոչ միայն վերականգնվում էին կալվածատերերի և նրանց հողերի վրա ապրող գյուղացիների հարաբերությունների հին կարգերը, այլև զգալի չափով ընդարձակվում էին կալվածատերերի վարչական, մանավանդ դատական իրավունքները։ Ճիշտ է, վերացված էր մահալական և այլ տեսակի մելիքների ու խոշոր կալվածատերերի իրավասությունն իրենց սեփականությունը կազմող կալվածքներից դուրս։ Սակայն այդ սեփական կալվածքներում վերապահված էր և ուժեղացրած նրանց պատասխանատվությունը հասարակական հանգստությունը և ապահովությունը պահպանելու գործում։ Դրա դիմաց տրվեց որոշ հավելյալ եկամուտ ստանալու իրավունքը։ 1846 թ. դեկտեմբերի 6-ին բարձրագույն հաստատված օրենքով[4] հրամայված էր խաների, բեկերի, աղալարների և մահմեդական բարձր դասակարգի այլ անձանց, նույնպես և հայ մելիքների սեփականություն համարել բոլոր այն հողերը, որոնց տիրում էին նրանց տոհմերը Ռուսաստանին միացնելու միջոցին և որոնք մինչև այդ օրը գտնվում էին նրանց անվիճելի տիրապետության[5] ներքո։ Այդ բոլոր հողերը նրանք կարող էին կարգավորել, կտակել և օտարացնել[6], ում որ ուզենային։ Այդ հողերի վրա ապրող գյուղացիներին պետք էր թողնել ներկա բնակության վայրում, պարտավորեցնելով, որ կատարեն որոշ պարտավորություններ հողատիրոջ օգտին որպես հատուցում նրա հողերի օգտագործման դիմաց, իսկ հողատիրոջը պիտի վերապահվեր գյուղացիներին վարչապես կառավարելու իրավունքը։

Այս օրենքը ընդարձակեց մահմեդական բարձր դասակարգի հողատիրությունը։ Այն հողերը, որոնք խանական կառավարության ժամանակ և մի քանի տասնամյակ այնուհետև համարվում էին նրանց ժամանակավոր, պայմանական և այլ և այլ սահմանափակումներով օգտագործվող կալվածքներ, հայտարարվեցին նրանց և նրանց ազգականների ժառանգական սեփականություն։ Նրանք դառնում էին այդ հողերի լիակատար տեր և տնօրեններ։

Մի քանի ամիս անց, 1847 թ. ապրիլի 20-ին բարձրագույն հավանականություն ստացավ կանոնադրությունը[7], որը ավելի ճիշտ որոշում էր կալվածատերերի և գյուղացիների փոխհարաբերությունները։ Որպես կալվածատիրոջ հողերի ժառանգական կապալառուներ՝ գյուղացիք պիտի նրան վճարեին՝ մուլուջահաք, այսինքն տասներորդը արտերի, այգիների և բանջարանոցների բերքերից, եթե գյուղացին իր միջոցներով է բոլոր աշխատանքները կատարել,

---

[3] Լալայեան Ե., Զանգեզուր, էջ 11։

[4] «Второе полное Собрание законов», т. XXI, № 20 678.

[5] Владение.

[6] Отчуждать.

[7] «Второе полное Собрание законов», т. XXII, № 21 825.